

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Արամ Մաֆարյանի և Հովհաննես Մարգարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-947-14.07.2010-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում
փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 204.35-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 204.36-րդ հոդվածի՝

- 1) «Նոր հանգամանքներով ե բառերը փոխարինել «Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով ե բառերով.
- 2) 3)-րդ կետը «դարձածե բառից հետո լրացնել «նոր երեւան եկած կամ ե բառերով.
- 3) 4)-րդ կետը «համապատասխանե բառից հետո լրացնել «նոր երեւան եկած կամ ե բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 204.37-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 204.37. Դատական ակտի վերանայման վարույթ հարուցելը

1. Դատարանը, սույն օրենսգրքի 144 հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով բողոքը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, որոշում է կայացնում նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու կամ բողոքը վերադարձնելու մասին:
2. Դատարանը, դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, այն պատշաճ ձեւով ուղարկում է բողոք ներկայացրած անձին եւ գործին մասնակցող անձանց՝ նշելով բողոքի քննության ժամանակը եւ վայրը:
3. Դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ որոշմամբ դատարանը կարող է միաժամանակ լրիվ կամ մասամբ կասեցնել դատական ակտի գործողությունը:
4. Դատական ակտի վերանայման բողոքը վերադարձվում է, եթե՝
 - 1) չեն պահպանվել սույն օրենսգրքի 204.36-րդ հոդվածով նախատեսված պահանջները.
 - 2) բողոքում նշված դատական ակտի վերանայումը ընդդատյա չէ այն դատարանին, որին հասցեագրվել է բողոքը.

- 3) բողոքը ներկայացվել է դրա համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետի խախտմամբ, եւ բողոք ներկայացրած անձը միջնորդություն չի ներկայացրել դա վերականգնելու մասին.
- 4) մինչեւ դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելը բողոք ներկայացրած անձից դիմում է ստացվել այն վերադարձնելու մասին.
- 5) դատական ակտը վերանայելու համար հիմք դարձած նոր երեւան եկած կամ նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել, եւ դատարանը լրացուցիչ պարզել է, որ այդպիսի հանգամանք չկա:է:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Օրինագծի ներկայացումը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով.

- 1) վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններում գործերի քննության կոլեգիալության սկզբունքն արդեն իսկ սահմանված է Քաղ. դատ. օր. 19-րդ հոդվածով, ուստի նույն օրենսգրքի 204.35-րդ հոդվածում դա նշելն ավելորդ է,
- 2) վերանայվող 204.35 եւ 204.37-րդ հոդվածներում կան կրկնություններ, մասնավորապես՝ եռօրյա ժամկետում որոշում կայացնելու մասին, որը նույնպես անհրաժեշտ է վերացնել,
- 3) օրենսգրքի 204.36-րդ հոդվածում նշված է միայն նոր հանգամանքներով բողոքի բովանդակությունը, մինչդեռ դա հավասարապես վերաբերում է նաեւ նոր երեւան եկած հանգամանքներով բողոքին,
- 4) 204.35-րդ հոդվածում անհարկի նշված է, որ դատարանը պարտավոր է բողոքը քննել ողջամիտ ժամկետում, որն արդեն իսկ նշված է Քաղ. դատ. օր. 216 եւ 236-րդ հոդվածներում,
- 5) 204.37-րդ հոդվածում կարգավորված չեն դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու սպառիչ հիմքերը, որոնք այժմ լրացվել են:

Այսպիսով, օրինագիծն ուղղված է Քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա կրկնաբանությունները վերացնելուն եւ այն իրավաբանական տեխնիկայի կանոններին համապատասխանեցնելուն: